մամարդ այս քաղաքի նախկին բնակչութեան հազիւ հետքն է մնացել»:

«Հայլեզու» եւ «հայացեղ» է համարում ուրեմն Բոդենշտէդտ Երեւանի եւ Նախիջեւանի երկրամասերը եւ Ախալցխայի փաշայութիւնը, որ եւ դեռեղում է իր աշխատութեան «Հայ ցեղը» խորագրով հատուածի տակ:

Ընդհակառակը՝ Ղարաբաղը, Գանձակը, անգամ Ալեքսանդրապոլի գաւառը, չնայած որ այս վերջինը (Փամբակի հետ միասին) այն ժամանակները վարչականօրէն վրացա-իմերէթեան նահանգի մէջ էր մտնում, Բոդենշտէդտ առնում է «թուրք-թաթարական ցեղը» խորագրով հատուածի տակ, ի չարս Շիրվան, Շէքի, Բաղու եւ թաթարական այլ շրջանների, որպէս մասեր «թուրքման հիմնական բնակչութեան եւ լեզու ունեցող» երկիրների:

Որչափ եւ ոչ լրիւ, բայց եւ այնպէս հայկական գաւառների մեծ մասին վերաբերեալ թուական տուեալներ գտնում ենք Բոդենշտէդտի մօտ, մինչ թուրք-թաթարական եւ վրացական շրջանների մասին նման տուեալներ պակասում են, անգամ Թիֆլիսի մասին: Բացառութիւն կազմում է վրացական Թելաւ գաւառը (Կախէթիայի մի մասը), որի մասին «Կովկասի ժողովուրդները» աշխատութեան մէջ (երես 969) գտնում ենք հետեւեալ թիւերը, կցուած «Վիճակագրական նօթեր» հատուածին (տես վերը):

«Թելաւի գաւառը,— ասում է Բոդենշտէդտ,— ունի ընդամէնը 88,830 բնակիչ*) երկու սեռի:: Դրանցից՝

Նստակեաց	
Վրացի	48,500
Հայ	18,000
Թաթար	2,800
Վաչկատուն	
Թուշ	7,600
Փշաւ	5,700
Խեւսուր	5,500
Քիսթ	730

Վրաց լեզուի տարածման շրջանների մասին խօսելիս Բոդենշտէդտ մէկ-մէկ յիշատակում եւ նկարագրում է վրացական ցեղերը (քարթլի, իմերէլ, դուրիացի, մինգրէլ եւայլն), խօսք չանելով երկրային-վարչական բաժանումների մասին (նահանգ, գաւառ եւայլն), մինչ նա հայ եւ թուրքման (թուրք-թաթար) լեզուների տարածման շրջանների մասին խօսելիս առաջնորդւում է այդ՝ վարչական բաժանումներով:

Այս վերջին՝ վարչական՝ տեսակէտից այն ժամանակները ողջ Անդրկովկասը ներկայացնում էր հետեւեալ գլխաւոր միաւորները. 1) Վրաց-Իմերէթեան նահանգ, 2) Ախալցխայի փաշայութիւն, 3) Հայկական Շրջան, 4) Կասպեան Շրջան: Առաջին երկուսը դիտւում էին առաւելապէս վրացական, երրորդը՝ հայկական եւ չորրորդը՝ թուրք-թաթարական հողային միաւորներ:

Հայկական Շրջանից եւ Ախալցխայի փաշայութիւնից (Ախալքալաքի հետ մէկտեղ) դուրս էին գտնւում ուրեմն այստեղ մեզ մասնաւորապէս հետաքրքրող հայաբնակ շրջաններից.—

1. Ղարաբաղը (Զանգեզուրի հետ միասին), որ դնում էր այսպէս կոչուած «Կասպեան Շրջանի» սահմանների մէջ, եւ 2. Լոռի-Փամբակը, Շիրակը (Ալ-պոլ), ինչպէս նաեւ Հայկական Ղազախ — Շամշադինը (Դիլիջանի գաւառ ներկայիս) եւ Լեռնային Գանձակը, որոնք մտնում էին «Վրացա-Իմերէթեան» կոչուած նահանգի սահմաններում: Լոռին, Փամբակը եւ Շիրակը միասին կազմում էին այդ նահանգի «Փամբակ-Շորագեալ» երկրամասը, որպէս նահանգի վարչական աւելի փոքր միաւոր (դիստանցիա): Նման միաւորներ էին կազմում նոյն այդ (վրաց-իմերէթեան) նահանգի մէջ՝ նաեւ Գանձակի գաւառը (նախկին խանութիւնը), ինչպէս եւ Ղազախ-Շամշատին ու Բորչալու վիճակները (դիստանց):

Ինչ վերաբերում է վարչական այդ փոքր միաւորների վիճակագրութեան, դժբախտաբար նրանցից միայն մի քանիսի մասին Բ-ի մօտ գտնում ենք տուեալներ: Դրանցից երեւաց ուրեմն, որ «Հայկական Շրջանի» Երեւանեան երկրամասը ունեցել է այն ժամանակ ընդամէնը 70-80,000 բնակիչ, որի «գրեթէ կէսը» կազմել են, ըստ Բ-ի ասութեան, թուրք-թաթարները: Եթէ մնացած կէսն էլ հայեր համարենք, ապա ուրեմն վերջիններիս թիւը

*) Համաձայն կառավարութեան կարգադրութեամբ 1842 թ. կատարուած վիճակագրութեան: Ծանօթ. Բոդ.-ի: